

ջանկայիշատակ Գէորգ Կաթողիկոսին գիմեց, խնդրելով որ բա-
երհաճի Հայ եկեղեցւոյ նուիրապետութեան անգամոց՝ Հայ կա-
թողիկոսների, պատրիարքների, մետրապօլիտների, արքեպիսկո-
պոսների, եպիսկոպոսների ցանկն ուղարկել, որպէս զի, երեւի,
նոցա հետ յարաբերութիւն սկսուի։ Այս գրութիւնը ստացուել
է Ս. Էջմիածնում 28 ին օգոստոսի 1873 թ.։ Բողոքական եկե-
ղեցեաց վերոյիշեալ ձգտման միջոցին, կազմակերպուելու հա-
մար ըստ նախնական քրիստոնէական եկեղեցեաց, շատ օգուա-
ւէտ կարող էր լինել նոցա Հայ եկեղեցու ուսումնասիրութիւ-
նը, Հայ եկեղեցու, որ աւելի քան որեւէ այլ քրիստոնեայ եկե-
ղեցի պահպանել է նախկին քրիստոնէական եկեղեցւոյ կերպ-
րանքը թէ ըստ վարդապետութեան և թէ ըստ աւանդու-
թեանց։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Անցեալ Հոկտեմբերի Արարատի համարում երկու խօսք ասա-
ցինք Ս. Աթուռոյս ձեմարանի պահպանութեան մասին, որոյ բո-
լոր բեռն ընկնում է Մայր Աթուռոյս աղքատիկ գանձարանի
վերայ, մինչդեռ այդ ձեմարանից Հայ ազգը մեծամեծ ակնկա-
լութիւնք ունի, սպասելով նորանից ընտիր ուսումնական և
քարոզիչ եկեղեցականք։ Վերոյիշեալ յօդուածում մենք յայտ-
նեցինք, որ իրաւանց հետ միշտ սերտութեամբ կապուած են և
պարտականութիւնք ուստի և Հայ ազգի վերայ ձեմարանից
ընտիր եկեղեցականներ ստանալու իրաւունքի հետ կայ և պար-
տականութիւն հոգալու գէթ կիսով չափ նոյն ձեմարանի նիւ-
թական միջոցները։ Մենք մինչև անգամ ցոյց էինք տուել,
թէ ինչ եղանակներով Հայ հասարակութիւնք և հարուստ ան-
հատներ կարող էին օգնել ձեմարանի պահպանութեան։ Այս
մասին ծանրութեամբ և հեռատեսութեամբ խորհելն ազգի
ամենամեծ պարտականութիւնն է, նախ այն պատճառով, որ

Ս. Աթոռոյս արդեանց աղբիւրներն անհաստատ են կախուած լինելով ըստ մեծի մասին կամաւոր տուրքերից և տարուայ պաղարբերութիւնից և երկրորդ մտածելու է, որ Ս. Աթոռոս բացի ձեմարանից հոգալիք շատ ունի, քանի որ սկսած Ս. Տաճարից, և Վեհարանից մինչև միաբանից խցերն ու հիւրանոցը կարօտ են հիմնաւոր նորոգութեան: Բայց ինչո՞վ պիտի լինին այդ վերանորոգութիւնը կամ հիմնաւոր շինութիւնը. քանի որ Ս. Աթոռոյս արդիւնքն հազիւ հազ բաւականանում է նորա տարեկան ծախքը ծածկելու, ամեն տեղակ խնայողութիւն անգամ գործ դնելով: Որպէս զի հայ ազգը Ս. Աթոռոյս կարեաց վերայ գաղափար ունենայ, թող իմանայ, որ տարեկան լոկ ցամաք հայի վերայ աւելի քան 10000 բուբլի ծախք ունի. ըստ այսմ և թող չափէ բոլոր միւս ծախքերը: Սրական ամենաքիչը 200 հոգի կերակրուում է վանքի խոհանոցից, չէնք յիշում ուխտաւորներ եղած ժամանակը, երբ կերակրուողների թիւը հինգ վեց անգամ բազմապատկուում է: Երանի թէ ուխտաւորաց տուած արդիւնքը ծածկէր Ս. Աթոռոյս արած ծախքը նոցա վերայ. յաճախ և այդ չէ լինում, վասն զի ուխտաւորաց մեծամասնութիւնն աղքատ և չքաւոր, փողալիքից է լինում, որոնք-իրանք կարօտ են Ս. Աթոռոյս օգնութեան, որ չէ կարող և իրան իրաւունք չէ համարում նոցա ջերմեռանդութիւնը շօշափել, զլանալով նրանց մի քանի օր նիւթական ապրուստ, որպէս զի նոքա գէթ հոգեպէս մխիթարուեն և կազդուրուեն իրանց սիրելի Մօր գրկում: Հապա մեր սիրելի ազգայինք թող հաշուեն, թէ նոցա հարուստներից քանի՞սը ամեն տարի որոշում է այցելելու իւր Սուրբ Աթոռն, ազգի մեծ սրբութիւնքն համբուրելու, սոցա օրհնութիւնն ստանալու, աչքով Աթոռի վիճակը տեսնելու և նորա կարեաց կարիկից լինելու իւր որդիական առատ տուրքով, որ իւր պարտականութիւնն է: Արդեանց աղբիւրներն էլ օր աւուր նուազանալու վրայ են. քանի որ ապրուստը թանգանում է և Աթոռոյս արդիւնքն, որ գլխաւորապէս իւր կալուածքներիցն է և գրեթէ միայն Երեւանի վիճակից, ժամանակով չպիտի կարո-

ղանան բաւարարութիւն տալ թէ Ճեմարանի և թէ Ս. Աթոռոյս պիտոյից։ Միթէ այս ազգի մտածման և հոգացողութեան առարկայ չպիտի լինի, քանի որ Ս. Աթոռոյս արդեանց նշանաւոր մասը (ուխտատեղեաց, վանքական կալուածոց, մոմս, վաճառութեան, եկեղեցեաց արդեանց որոշեալ մասը) Վեհափառ Հայրապետաց կարգադրութեամբ որոշուած են յօգուտ թեմական և ծխական դպրոցաց, որոց մէջ ազգի զաւակներն են ուսանում և դաստիարակուում։ Այս այսպէս լինելից յետ միթէ վիճակայնոց պարտքն էլ չէ հոգալու Ս. Աթոռոյս Ճեմարանի վերայ, որ նոյնպէս իրանցն է, իրանց բարոյական պիտոյքը հոգալու կարող եկեղեցականներ պատրաստելու համար է։ Հետաքրքրուել ե՞ն արդեօք մեր բարեպաշտ ազգայինք, թէ որքան արդիւնք են մտնում վիճակներից Ս. Աթոռոյս գանձարանը։ Ռուսաստանի վիճակներից ամենանշանաւորը Վրաստանի և Իմերէթի վիճակն է, և շատ տարիներ է, որ սա, կարծես, մոռացել է իւր մօր, Ս. Աթոռոյս գոյութիւնն և եթէ պատահել են ըստ պաշտօնի յիշեցնողներ ժողովրդին նորա գոյութեան մասին այն ևս եղել է կարծես ժողովրդեան և Աթոռոյս մէջ սառնութիւն գցելու դիտմամբ միայն ի վնաս երկուց կողմանց։ Այսպիսի է եղած մտումք մեր գործիչների բռնած գիրքն Մայր Աթոռոյս վերաբերութեամբ, որ բնաւ օգտակար չէ և ոչ իսկ իրան ժողովրդեան, վասն զի ծառն արմատով է ծառ, տունն հիմամբ է հաստատուն։ Ի՞նչ պարծանք է մի ազգի համար, եթէ նորա հարուստները ճոխ և շուայլ կեանք վարեն հոյակապ բնակարաններում, մինչդեռ նորա հասարակական հաստատութիւնք Ս. Աթոռը, Աստուծոյ տաճարներն ու դպրոցները աւերակի կերպարանք են կրում։ Միթէ Սուրբ Աթոռոյս իւրաքանչիւր միաբան մի գործակատարի չափ, և ազգի Հայրապետը միջակ կարողութեան տէր մի ազգայնոյ չափ կեանքի յարմարութիւն ունենալու իրաւունքը չունի՞ն, կամ մի բարձրաստիճան այցելու, իւր դրքին յարմար հիւրասիրութիւն իրաւունքը չպիտի վայելէ ազգի տանը՝ Սորա Մայր Աթոռում, քանի որ նա ազգի հիւրն է։ Միթէ պատուաբեր է ազգի համար, որ

աշխարհի ամեն ծայրերից Ս. Աթոռս այցելող մեծամեծք կամ գիտնականք հիւրասիրուեն Ս. Աթոռոյս հիւրատան՝ Ղազարապատում, որոյ ամենընտիր սենեակներն էլ չեն կարող մըրցել մի վաճառականի կամ բժշկի նախասենեակի հետ: Ռեժեպաղդաբար այս ամենը ատոյգ իրողութիւն է և կարօտ փոփոխման. բայց ինչով կլինի այդ փոփոխութիւնն, ինչով կվերանորոգուին Ս. Աթոռոյս շինուածները սկսած Ս. Տաճարից մինչև ցվերջին խուցը. եթէ ոչ դրամով, Բայց դժբաղդաբար չնայելով հայ ազգի բարեպաշտութեան և պատրաստակաճութեան միշտ պայծառ պահելու իւր Ս. Աթոռը, կարծես մի չար ոգի ղեկավարել է այն անձանց մի մասն, որոնք պարսկական էին զօրացնելու այդ բարեպաշտական զգացմունքն և որոնք ընդհակառակն մի տեսակ կասկած ցանել են կարծես ժողովրդի սրտի մէջ յօգուտ Ս. Աթոռոյս նուիրատուութեան վերաբերութեամբ: Քանի որ ազգի միամիտ բարեպաշտական զգացմանց ղեկավարք այսպիսիք են, քանի որ ազգի և նորա եկեղեցականաց յարաբերութեան մէջ փոխադարձ վստահութիւնը շօշափուում է, եսասէր անձանց գործունէութեամբ, եկեղեցւոյ եւ ազգի շահերի պաշտպանութեան դիմակի տակ, Հայ ազգը միշտ խեղճ կմնայ բարոյապէս և նորա հասարակական հիմնարկութիւնքը աւերակ, Հայ ազգն իւր պատմութեան մէջ շատ խրատներ ունի իմաստուն և հեռատես լինելու համար՝ միթէ պակաս խրատներ են նորա համար անհաւատարիմ թէ եկեղեցական և թէ աշխարհական անձանց ոմանց տուած խրատները: Եթէ այս խրատներից օգուտ չքաղէ և չիմաստանայ, հետեւանք բարոյական և մտաւոր վնասն կլինի, որ մահաբեր է քան մարմնավոր մահը, Ուստի և ազգի գլխավոր պարտքն է հոգալու իւր այն հաստատութեանց վերայ, որոնք նորա մտաւոր և բարոյական կենաց աղբիւրներն են: Սորա մէջ է հայ ազգի փրկութիւնը. իւր եկեղեցւո և դպրոցների հետ սերտութեամբ կապուելու մէջ է նորա երջանկութիւնն և ոչ սուտակասպաս անձանց քարոզութեանց հետեւելու մէջ, որոնք գէպի այն են հայում, թէ ամեն ինչ որ մտանում է Ս. Աթոռը, կորած է

ազգի համար. մինչդեռ սա ամեն կենսական անյարմարութեանց տանում է: ազգի միակ ձեւարանը պահպանելու համար: Թող հայ ազգն իւր բարոյական օգուտը ճանաչելով գէթ մասամբ ինքն բառնայ ճեմարանի բեւը և այն ժամանակ Ս. Աթոռոյս անյարմարութիւնքն կվերանան իրանք տարիների ընթացքում: Այն ժամանակ Ս. Աթոռս առանց ժողովրդեան ձանձրութիւն տալու, առանց անբարեմիտների զրպարտութեանց առիթ տալու իւր խնայած միջոցներով տակաւ առ տակաւ տարիների ընթացքում կվերանորոգուի, ոկսած Ս. Տաճարից մինչև միաբանից խցերն, որոնք իրանց ներկայ գրութեամբ աւելի արգելանցի նման են քան բնակարանի: Ով պահանատես եղել է, թող նա վկայէ:

Ահա աւելի քան վաթսուէ տարի է, որ Ս. Աթոռս Ռուսաց իշխանութեան ներքոյ է. թող մեր ռուսահայտակ ազգայինք յիշեն, թէ ի՞նչ էր իրանց վիճակը վաթսուէ տարի առաջ և ի՞նչ է այսօր: Թող Թիֆլիզեցին Թիֆլիզը յիշէ վաթսուէ տարի առաջ և այլ քաղաքացիք իրանց քաղաքները — տեմեն, թէ որպիսի փոփոխութեանց ենթարկուել են թէ ժողովրդիկեանքն և թէ նոյն իսկ շինուածքները, որոնք իրճիթներից պալատանման բնակարաններ են դարձել. միայն Ս. Աթոռոյս շինուածքներն են անփոփոխ մնացել և աւելի ու աւելի խախտուել: մասամբ էլ քանդուել, անկարող նորոգուելու միջոցների պակասութեանց պատճառով:

Եւրոպական քաղաքակրթութիւն և գիտութիւն ձեռք բերել ենք ձգտում. բայց չենք տեսնում, որ եւրոպայի քաղաքակրթութեան կոթողը նորա հասարակական կեանքի և հասարակական հաստատութեանց ճիւղ և հոյակապ գիրքն է: Մեր ազգն եւրոպացիներին ծանօթացնել աշխատում ենք, ազնիւ ձգտումն. բայց չէ, որ նոքա աւելի հմուտ են ազգեր ու հասարակութիւններ ճանաչելում և նոցա արժանիքը գնահատելում: Եւրաքանչիւր տարի մի քանի տասնեակ եւրոպացիք թէ իշխանագունք թէ գիտնականք և թէ քաղաքական գործակալք ճանապարհորդում են Կովկասում և այցելում նորա քաղաք-

ներն, ուր յաճախ վայելում են եւ հայ հարուստ անհատներին ճոխ հիւրասիրութիւնը: Նոքա տեսնում են ամեն ուրեք հոյակապ տներ, քարվանսարանների, խանութների, գործարաններ ունեն հն դոքա պատկանում — այս ինչ կամ այն ինչ հայ անհատի: Հարուստ Հայի հոյակապ տան դիմացը երևումէ մի անշուք տաճար Աստուծոյ կամ խրճիթանման շինուածք դպրոցի: Եւրոպացու հետաքրքրութիւնը շարժվում է եւ նա իմանում է, որ դոքա էլ համեմատաբար Կովկասում հարուստ հայ ժողովրդեան հասարակական հաստատութիւնքն են, մէկը հայի բարեպաշտական զգացմանց եւ միւսը հայի մտաւոր զարգացման սիրոյ արտայայտիչք յաչս Եւրոպացի ճանապարհորդի: Որպիսի տպաւորութիւն կթողնեն երկու հաստատութիւնքն էլ հասարակական կեանքով շնչող եւ ապրող Եւրոպացու վերայ, ամենքի համար հասկանալի է: Նոյն ճանապարհորդք սովորաբար ի վերջոյ այցելում են Կովկասի ամենահարուստ եւ աւելի քաղաքակրթուած հայ ազգի Մայր Աթոռը, Ս. Էջմիածինը իւր թանգարանով եւ գրադարանով. ո՞վ գիտէ ինչ փայլուն երևակայութեամբ գալիս են նոքա այդ հնադարեան Աթոռը փառաւոր եւ հոյակապ տեսնելու եւ վերադառնում են հիասթափմամբ: Սրանից էլ լաւ միջոց կլինի՞ր Եւրոպացու համար հայ ազգի ներկայ ուղիւթիւնն ու ընթացքը ճանաչելու: Իսկ քաղաքակիրթ Եւրոպայի լուսաւորեալ երկիրներում մինչեւ իսկ գիւղերի զարդը՝ ամենից փառաւոր շէնքը Աստուծոյ տաճարն է անշուշտ եւ դպրոցը, մէկը ժողովրդի բարեպաշտութեան եւ միւսը ուսումնասիրութեան վկայն:

Ազգի քաղաքակրթութեան եւ յառաջագիմութեան նշաններն ոչ թէ անհատների ճոխ շուրջ ապրուստն է, որ աւելի բարոյական անկման նշաններ են, այլ նորա՝ ազգի հասարակական հիմնարկութեանց հոյակապութիւնն ու ապահովութիւնը: Այս հասկացողութիւնն ու զգացմունքն է ազգերին բարձրացնողն ու ազնուացնողը: Միայն Լոնդոն քաղաքը 2000 ից աւելի բարեգործական հասարակական հաստատութիւնք ունի — հոյակապ տաճարներ, ամեն տեսակ դպրոցներ, գիտնական ըն-

կերու-թիւնք, թմնկարաններ, անկելանոցներ, աղքատանոց-
ներ, հիւանդանոցներ, և այլն, որոնք բոլորն էլ ապահոված են
և տարիւից տարի ժողովրդի հարուստների կողմից միլիոններ
են ստանում, այն հարուստների որոնք հասկանում են, որ
ընդհանրութեան ազգի աւելի շահարեր են և նորա փառքն և
պատիւը կազմում են հասարակական հաստատութիւնք, քա-
նահատների հարստութիւնք, որոնք այնքան յարասե չեն կա-
րող լինիլ: Եւ յիրաւի մենք հայերս այս փորձով չգիտենք,
քանի՜ նշանաւոր հարուստ Հայի ժողովութիւնը հասել է
նորա թուան, միւնչեռ հասարակական հաստատութեանց ա-
ւանդածները ցայժմ էլ գործում են յօգուտ ազգի: Եւրոպա-
ցիներից մենք Հայերս հասարակաց շահը անհատականից բարձր
դասելը պիտի սովորենք, հասարակական սեպհականութիւնք
աւելի քան անհատականը սիրել ու ապահովել սովսրենք և ոչ
նոցա շուռլ կեանքն ու արտաքին ձեւերը փոխ աւռնենք: Միայն
այս ճանապարհով, միայն մեր հասարակական հաստատութիւնքն
ապահովելով և կապահովենք մեր գոյութիւնն ու ապագայն, —
այսպէս մենք մեզ կճանաչենք և օտարներիին մեզ կժանօթաց-
նենք, թէ Հայերս էլ արժանաւոր զաւակներ ենք ընդհանուր
մարդկութեան: Մայր Աթոռի պալատութիւնը, Առաստուծոյ
տաճարների ճիւղութիւնը, ճիւղարանի և այլ հաստատութեանց
ապահովութիւնը, բազմաթիւ ապահովեալ աղքատանոցներ,
հիւանդանոցներ և այլ ուսումնական ու բարեգործական
հաստատութիւնքն են ազգի զարդն ու պարծանքը, հաստա-
տութիւնն ու յարասեութիւնը և ոչ մասնաւոր անցաւորա-
կան հարստութիւնք: Հասկանանք այս, զգանք, գործենք և
կապրենք: